

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 12.06.20թ. հեռավար կարգով անցկացված թիվ 13.19-20 նիստի

Հարցմանը մասնակցել են գիտական խորհրդի 36 անդամներից 28-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:
2. Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Գոռ Նիկողոսյանի թեկնածուական ատենախոսության համար որպես երկրորդ ղեկավար Ելենա Կոլզանովային /Տեսական ֆիզիկայի լաբորատորիա, ՄՀՄԻ, ք. Դուբնա, ՌԴ/ հաստատելու կապակցությամբ ԲՈԿ դիմելու հարցը:
3. Օպտիկայի հեռակա ասպիրանտ Աննա Այվազյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:
4. Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Մարգարիտա Ստեփանյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Լսեցին՝ առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան

Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ **Ա.Ռ. Բալաբեկյանը** ներկայացրեց, որ ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Գ. Նիկողոսյանը ունի 7 տպագրված հոդվածներ գրախոսվող ամսագրերում: Նա հանձնել է պարտադիր դասընթացների բոլոր քննությունները: Ներկայումս աշխատում է ինքնուրույն հոդվածի վրա:

Ա.Ռ. Բալաբեկյանը ներկայացրեց նաև 1-ին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Ս. Ֆալթաջանյանի աշխատանքները, ով ունի 2 տպագրված հոդված գրախոսվող ամսագրերում և հանձնել է պարտադիր դասընթացների բոլոր քննությունները:

Տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ և ասպիրանտի գիտական ղեկավար **Արամ Սահարյանը** նշեց, որ Տիգրան Պետրոսյանը ավարտում է ուսուցման առաջին տարին: Հաշվետու ժամանակավատվածում հետազոտությունները նվիրված են եղել վակուումային քվանտային երևույթների ուսումնասիրմանը ժամանակից գծային կախված մասշտաբային ֆակտորովկոսմոլոգիական մոդելներում և Միլնի տիեզերքում: Ասպիրանտի աշխատանքը եղել է արդյունավետ: Նա հրատարակել է երկու գիտական հոդվածներ միջազգային պարբերականներում և ելույթ է ունեցել միջազգային գիտաժողովում:

Որոշեցին՝ ատեստավորել առկա ասպիանտներ **Գոռ Նիկողոսյանին, Մարգիս Տալթազանյանին և Տիգրան Պետրոսյանին:**

Լսեցին՝

Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ **Գոռ Նիկողոսյանի** թեկնածուական ատենախոսության համար որպես երկրորդ ղեկավար Ելենա Կոլզանովային /Տեսական ֆիզիկայի լաբորատորիա, ՄՀՄԻ, ք. Դուբնա, ՌԴ/ հաստատելու կապակցությամբ ԲՈԿ դիմելու հարցը:

Ելույթ ունեցավ

Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ **Ա.Ռ. Բալաբեկյանը** ներկայացրեց երկրու գիտական ղեկավար ունենալու հետ կապված ԲՈԿի պատասխանը Գորի հարցմանը, ինչպես նաև Դուբնայի հետ համագործակցության պայմանագիրը և Դուբնայում Գորի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման քաղվածքը:

Որոշեցին՝

Հաշվի առնելով ԲՈԿ-ի պատասխանը Գ.Նիկողոսյանին և Դուբնայի կողմից տրամադրված քաղվածքը, երաշխավորել Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Գոռ Նիկողոսյանի թեկնածուական ատենախոսության համար որպես երկրորդ ղեկավար Ելենա Կոլզանովային հաստատելու համար:

Լսեցին՝ Օպտիկայի ամբիոնի **հեռակա ասպիրանտ Աննա Այվազյանի** թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցավ

Լևոն Ասլանյանը ներկայացրեց օպտիկայի ամբիոնի հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Աննա Այվազյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը: Ասլանյանը ներկայացրեց առաջակվող թեման:

Որոշեցին՝

Հաստատել ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Աննա Այվազյանի հետևյալ թեման՝ «Լույսի բևեռացման տարածական էվոլյուցիան կառուցվածքային և մակաձված անհամասեռությամբ միջավայրերում» Ա.04.21 <<Լազերային ֆիզիկա>> մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար նշանակել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Ասլանյանին:

Լսեցին՝ Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի հայցորդ
Մարգարիտա Ստեփանյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցավ

Համլետ Բադալյանը, ով ներկայացրեժ Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի
ամբիոնի հայցորդ Մարգարիտա Ստեփանյանի թեմայի և գիտական ղեկավարի
հաստատման հարցը: Բադալյանը ներկայացրեց առաջակվող թեման:

Որոշեցին՝ Հաստատել հայցորդ Մարգարիտա **Ստեփանյանի** հետևյալ թեման՝
«Արտաքին գործոնների ազդեցությունը ֆոսֆոլիպիդային համակարգերի
մոլեկուլային և վերմոլեկուլային կառուցվածքի վրա» 03.00.02 << Կենսաֆիզիկա >>
մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար նշանակել ֆիզ.-մաթ. Գիտությունների թեկնածու,
Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի դոցենտ **Համլետ Գուրգենի
Բադալյանին**

Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան